

**ՄՈՐՄԱԶԳԻ (SOLANACEAE) ԲԱՆՋԱՐԱՅԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԵՐԻ
ՍԵԼԵԿՑԻՈՆ ՆՈՐ ՍՈՐՏԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ**

ԿԱՐԻՆԵ ՍԱՌԻԿՅԱՆ

Մորմագգի մշակաբույսերի սելեկցիայի և տեխնոլոգիայի բաժնի վարիչ,
ՀՀ ԷՆ Բանջարաբուստանային և տեխնիկական
մշակաբույսերի գիտական կենտրոն,
գյուղատնտեսական գիտությունների թեկնածու
karuine_sarikyan@mail.ru, karinesarikyan@gmail.com

ԳՈՀԱՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Մորմագգի մշակաբույսերի սելեկցիայի և տեխնոլոգիայի
բաժնի ավագ գիտաշխատող,
ՀՀ ԷՆ Բանջարաբուստանային և տեխնիկական
մշակաբույսերի գիտական կենտրոն,
գյուղատնտեսական գիտությունների թեկնածու
gohar-k@mail.ru

ԱՐՈՒՍ ԶՈՒՐԱԲՅԱՆ

Մորմագգի մշակաբույսերի սելեկցիայի և տեխնոլոգիայի
բաժնի կրտսեր գիտաշխատող,
ՀՀ ԷՆ Բանջարաբուստանային և տեխնիկական
մշակաբույսերի գիտական կենտրոն
aruszurabyan@gmail.com

ԳԱՅԱՆԵ ՇԱԲՈՅԱՆ

Մորմագգի մշակաբույսերի սելեկցիայի և տեխնոլոգիայի
բաժնի կրտսեր գիտաշխատող,
ՀՀ ԷՆ Բանջարաբուստանային և տեխնիկական
մշակաբույսերի գիտական կենտրոն
gayaneshaboyan@mail.ru

ՎԱՐԴԱՆՎԱՐԻՆՈՒՅԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Մորմագգի մշակաբույսերի սելեկցիայի և տեխնոլոգիայի բաժնի լաբորանտ,
ՀՀ ԷՆ Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի
գիտական կենտրոն,
vardanyanvarduhia-3@aspu.am

ՄԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մորմագգի մշակաբույսերի սելեկցիայի և տեխնոլոգիայի բաժնի կրտսեր
գիտաշխատող, հայցորդ, ՀՀ ԷՆ Բանջարաբուստանային և տեխնիկական
մշակաբույսերի գիտական կենտրոն
marine.job5@mail.ru

DOI: 10.54503/978-9939-1-2075-1-435

Համառոտագիր

Հոդվածում ներկայացվել են մորմագգի բանջարային մշակաբույսերի նոր

սորտերի սորտափորձարկման արդյունքները, որոնք կատարվել են 2022 – 2024 թթ. ընթացքում ՀՀ Արարատյան հարթավայրի պայմաններում մշակման ժամանակ:

Ուսումնասիրված սորտերը աչքի են ընկել կենսաբանական, մորֆոլոգիական, տնտեսական արժեքավոր և որակական հատկություններով և հատկանիշներով: Նոր սորտերը վաղահասությամբ, բերքատվությամբ գերազանցել են ստուգիչ սորտերին: Պոմիդորի *Ասպրամ* և *Տիպան* սորտերի սերմերի ծլումից մինչև պտուղների հասունացումը տևել է համապատասխանաբար՝ 116 և 108 օր, իսկ պտղաբերման շրջանը՝ 71 և 80 օր, իսկ ստուգիչի մոտ համապատասխանաբար՝ 117 և 71 օր: Ապրանքային բերքը *Ասպրամ* և *Տիպան* սորտերի մոտ կազմել է 765,5 և 955,2g/հա, իսկ ընդհանուր բերքը՝ համապատասխանաբար՝ 770,4 և 970,8 g/հա, իսկ ստուգիչի մոտ համապատասխանաբար՝ 690,5 և 697,3 g/հա: Չերի պոմիդորի՝ *Հմմի* սորտի սերմերի ծլումից մինչև պտուղների հասունացումը տևել է՝ 102 օր, իսկ պտղաբերման շրջանը՝ 80 օր, իսկ ստուգիչի մոտ՝ համապատասխանաբար՝ 106 և 72 օր: Ապրանքային բերքը կազմել է՝ 310,5g/հա, իսկ ընդհանուր բերքը՝ համապատասխանաբար՝ 314,8g/հա, իսկ ստուգիչի մոտ համապատասխանաբար՝ 306,2 և 309,4g/հա: Զիլի տաքդեղի՝ *Նորաբաց* սորտի սերմերի ծլումից մինչև պտուղների տեխնիկական հասունացումը տևել է՝ 97 օր, իսկ կենսաբանական հասունացումը՝ 120օր, պտղաբերման շրջանը՝ 78 օր, իսկ ստուգիչի մոտ՝ համապատասխանաբար՝ 102, 132 և 72 օր: Ապրանքային բերքը կազմել է՝ 378,2g/հա, ընդհանուր բերքը՝ համապատասխանաբար՝ 384,2g/հա, իսկ ստուգիչի մոտ համապատասխանաբար՝ 290,6 և 296,9g/հա: Կարմիր բադրիջանի *Սոլսիս* սորտի սերմերի ծլումից մինչև պտուղների տեխնիկական հասունացումը տևել է 92 օր, կենսաբանական հասունացումը՝ 120 օր, պտղաբերման շրջանը՝ 80 օր: Ապրանքային բերքը կազմել է 390,1g/հա, իսկ ընդհանուր բերքը՝ համապատասխանաբար՝ 395,8g/հա: Ֆիզալիսի՝ *Լեդի* սորտի սերմերի ծլումից մինչև պտուղների հասունացման սկիզբը տևել է 87 օր, իսկ պտղաբերման շրջանը՝ 105 օր, իսկ ստուգիչի մոտ՝ համապատասխանաբար՝ 94 և 98 օր: Ապրանքային բերքը կազմել է 526,8g/հա, իսկ ընդհանուր բերքը՝ համապատասխանաբար՝ 532,6g/հա, իսկ ստուգիչի մոտ համապատասխանաբար՝ 420,2 և 428,4g/հա: Պոմիդորի *Ասպրամ* և *Տիպան* սորտերի պտուղները պարունակում են 6,7 և 7,3% չոր նյութեր, 3,5 և 4,3% շաքարներ, 36,25 և 38,25մգ% վիտամին C, 0,52 և 0,42% տիտրվող թթվություն, իսկ ստուգիչի մոտ այդ ցուցանիշները կազմում են համապատասխանաբար՝ 6,7%, 3,5%, 36,15մգ%, 0,49%: *Հմմի* սորտի պտուղները պարունակել են 7,3% չոր նյութեր, 4,3% շաքարներ, 39,25մգ% վիտամին C, 0,47% տիտրվող թթվություն, իսկ ստուգիչի մոտ այդ ցուցանիշները կազմում են համապատասխանաբար՝ 7,2%, 4,1%, 35,35մգ%, 0,41%: Զիլի տաքդեղի *Նորաբաց* սորտի պտուղները տեխնիկական հասունացման շրջանում պարունակել են 8,8% չոր նյութեր, 4,5% շաքարներ, 98,25մգ% վիտամին C, կենսաբանական հասունացման շրջանում՝ 10,5,3% չոր նյութեր, 5,8% շաքարներ, 185,65մգ% վիտամին C, իսկ ստուգիչի մոտ այդ ցուցանիշները կազմում են համապատասխանաբար՝ 8,1%, 3,3%, 90,75մգ%, 9,6%, 4,2%, 175,45մգ%: Բադրիջանի *Սոլսիս* սորտի պտուղները տեխնիկական հասունացման շրջանում պարունակել են 7,4% չոր նյութեր, 3,4% շաքարներ, 4,85մգ% վիտամին C, կենսաբանական հասունացման շրջանում՝ 9,7% չոր նյութեր, 7,7% շաքարներ, 6,55մգ% վիտամին

C: Ֆիզալիսի Լեդի սորտի պտուղները պարունակել են 10,2% չոր նյութեր, 5,7% շաքարներ, 36,25մգ% վիտամին C, 0,59% տիտրվող թթվություն, իսկ ստուգիչի մոտ այդ ցուցանիշները կազմում են համապատասխանաբար՝ 9,2%, 5,6%, 31,85մգ%, 0,56%:

Կատարված ուսումնասիրությունները համոզիչ կերպով վկայում են, որ մեր կողմից բուծված նոր սորտերը գերազանցելով ստուգիչներին, ցուցաբերել են լավագույն հատկությունները և հատկանիշները: Նրանք արժանի են լայնորեն ներդնել հանրապետության տարբեր գոտիների ֆերմերային տնտեսություններում, ազգաբնակչությանը որակյալ և բարձրարժեք սննդամթերքով, իսկ վերամշակող արդյունաբերությանը՝ հումքով ապահովելու համար:

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ պոմիդոր, չերի, չիլի տաքդեղ, բադրիջան, կենսաբանական հատկություններ, մորֆոլոգիական ցուցանիշներ, սորտափորձարկում, բերքատվություն, չոր նյութեր, շաքարներ, վիտամին C, թթվայնություն:

SELECTION OF NEW VARIETIES OF VEGETABLE CROP OF SOLANACEAE

KARINE SARIKYAN

Head of the Department of Selective Breeding and
Growing Technology Solanaceae Crops
Scientific Center of Vegetable and Industrial Crops ME RA
PhD in Agricultural Sciences
karuine_sarikyan@mail.ru, karinesarikyan@gmail.com

GOHAR KIRAKOSYAN

Department of Selective Breeding and
Growing Technology Solanaceae Crops
Scientific Center of Vegetable and Industrial Crops ME RA
PhD in Agricultural Sciences, Senior researcher
gohar-k@mail.ru

ARUS ZURABYAN

Department of Selective Breeding and
Growing Technology Solanaceae Crops
Scientific Center of Vegetable and Industrial Crops ME RA
Junior researcher
aruszurabyan@gmail.com

GAYANE SHABOYAN

Department of Selective Breeding and
Growing Technology Solanaceae Crops
Scientific Center of Vegetable and Industrial Crops ME RA
Junior researcher
gayaneshaboyan@mail.ru

VARDUHI VARDANYAN

Department of Selective Breeding and
Growing Technology Solanaceae Crops
Scientific Center of Vegetable and Industrial Crops ME RA
Laboratory assistant
vardanyanvarduhia-3@aspu.am

MARINE GRIGORYAN

Department of Selective Breeding and
Growing Technology Solanaceae Crops
Scientific Center of Vegetable and Industrial Crops ME RA
Junior researcher, applicant
marine.job5@mail.ru

Abstract

The article presents the results of variety testing of new root vegetable crop varieties, which were conducted from 2022 to 2024 during cultivation in the conditions of the Ararat Plain in the Republic of Armenia.

The studied varieties stood out for their biological, morphological, economically valuable and qualitative properties and characteristics. The new varieties surpassed the control varieties in terms of precocity and yield. Thus, the periods from seed germination to fruit ripening for the tomato varieties Aspram and Titan were 116 and 108 days, respectively. The fruiting periods were 71 and 80 days, respectively, for these varieties. For the control, the periods were 117 and 71 days, respectively. The marketable yields of the Aspram and Titan varieties were 765.5 and 955.2 c/ha, respectively, and the total yields were 770.4 and 970.8 c/ha, respectively. The test variety yielded 690.5 and 697.3 c/ha, respectively. The period from seed germination of the cherry tomato variety Emmy to fruit ripening was 102 days, and the fruiting period was 80 days, and the test variety was 106 and 72 days, respectively. The commercial yield was 310.5 c/ha, and the total yield was 314.8 c/ha, respectively. The inspector's yields were 306.2 and 309.4 c/ha, respectively. The period from seed germination of the chilli pepper variety Norabats to technical ripeness of the fruits lasted 97 days, while biological ripening lasted 120 days. The fruiting period was 78 days, and for the inspector, it was 102, 132, and 72 days, respectively. The commercial yield was 378.2 c/ha, the total yield was 384.2 c/ha, respectively, and the inspector's was 290.6 and 296.9 c/ha, respectively. The period from seed germination of the red eggplant variety Solsis to the technical ripeness of the fruits lasted 92 days, biological ripeness was 120 days, and the fruiting period was 80 days. The commercial yield was 390.1 c/ha, and the total yield was 395.8 c/ha, respectively. The period from seed germination of the Physalis variety 'Lady' to the beginning of fruit ripening was 87 days, and the fruiting period was 105 days. In contrast, for the inspector, these periods were 94 and 98 days, respectively. The marketable yield was 526.8 c/ha, and the total yield was 532.6 c/ha, respectively. In contrast, the inspector's yields were 420.2 and 428.4 c/ha, respectively. The fruits of the Aspram and Titan tomato varieties contain 6.7% and 7.3% dry matter, 3.5% and 4.3% sugars, 36.25% and 38.25 mg% vitamin C, and 0.52% and 0.42% acidity. In the tester, these indicators are, respectively: 6.7%, 3.5%, 36.15 mg%, and 0.49%. The fruits of the Emmy variety contained 7.3% dry matter, 4.3% sugars, 39.25 mg% vitamin C, and 0.47% acidity. In the tester, these indicators were, respectively: 7.2%, 4.1%, 35.35 mg%, and 0.41%. The fruits of the Norabats variety of chili pepper during the period of technical ripeness contained 8.8% dry matter, 4.5% sugars, 98.25 mg% vitamin C, during the period of biological ripeness – 10.5.3% dry matter, 5.8% sugars, 185.65 mg% vitamin C, and in the test sample these indicators are respectively: 8.1%, 3.3%, 90.75 mg%, 9.6%, 4.2%, 175.45 mg%. The fruits of the Solsis variety of eggplant during the period of technical ripeness contained 7.4% dry matter, 3.4% sugars, 4.85 mg% vitamin C, and during the period of biological ripeness, 9.7% dry matter, 7.7% sugars, 6.55 mg% vitamin C. The fruits of the Physalis Lady variety contained 10.2% dry matter, 5.7% sugars, 36.25 mg% vitamin C, and 0.59% acidity. In the tester, these indicators were, respectively: 9.2%, 5.6%, 31.85 mg%, and 0.56%.

The conducted studies convincingly indicate that the new varieties bred by us, surpassing the testers, have demonstrated the best properties and characteristics.

They deserve to be widely introduced into farms across different regions of the republic, providing the population with high-quality and high-value food, as well as the processing industry with raw materials.

Keywords and phrases: Tomato, cherry, chilli pepper, eggplant, biological properties, morphological indicators, variety testing, yield, dry matter, sugars, vitamin C, acidity.

ИЗУЧЕНИЕ НОВЫХ СОРТОВ ОВОЩНЫХ КУЛЬТУР SOLANACEAE

КАРИНЕ САРИКЯН

Заведующий отделом селекции и технологии возделывания пасленовых культур
Научного центра овощебахчевых и технических культур МЭ РА,
кандидат сельскохозяйственных наук
karuine_sarikyan@mail.ru, karinesarikyan@gmail.com

ГОАР КИРАКОСЯН

Старший научный сотрудник, соискатель отдела селекции и
технологии возделывания пасленовых культур
Научного центра овощебахчевых и технических культур МЭ РА
gohar-k@mail.ru

АРУС ЗУРАБЯН

Научный сотрудник соискатель отдела селекции и
технологии возделывания пасленовых культур
Научного центра овощебахчевых и технических культур МЭ РА
aruszurabyan@gmail.com

ГАЯНЕ ШАБОЯН

Младший научный сотрудник, соискатель отдела селекции и
технологии возделывания пасленовых культур
Научного центра овощебахчевых и технических культур МЭ РА
gayaneshaboyan@mail.ru,

ВАРДУИ ВАРДАНЯН

Лаборант отдела селекции и технологии возделывания пасленовых культур
Научного центра овощебахчевых и технических культур МЭ РА
vardanyanvarduhia-3@aspu.am

МАРИНЕ ГРИГОРЯН

Младший научный сотрудник, соискатель отдела селекции и
технологии возделывания пасленовых культур
Научного центра овощебахчевых и технических культур МЭ РА
marine.job5@mail.ru

Аннотация

В статье представлены результаты сортоиспытания новых сортов овощных культур Мормазга, проведенного в 2022–2024 годах. при возделывании в условиях Араратской равнины РА.

Изученные сорта отличались биологическими, морфологическими, хозяйственно-ценными и качественными свойствами и характеристиками. Новые сорта превосходили контрольные сорта по скороспелости и урожайности. Так, от всходов семян до созревания плодов сортов томата Аспрам и Титан прошло 116 и 108 дней соответственно, а периода плодоношения – 71 и 80 дней, а контрольного периода – 117 и 71 день соответственно. Товарная урожайность сортов Аспрам и Титан составила 765,5 и 955,2 т/га, общая урожайность – 770,4 и 970,8 т/га соответственно, а по контролю – 690,5 и 697,3 т/га соответственно. У сорта томатов черри Эмми от всходов семян до созревания плодов прошло 102 дня, до периода плодоношения – 80 дней, у контроля – 106 и 72 дня соответственно. Товарная урожайность составила 310,5 т/га, общая урожайность – 314,8 т/га соответственно, а по тестеру – 306,2 и 309,4 т/га соответственно. От всходов семян до технического созревания плодов перца острого сорта Норабац прошло 97 дней, биологического созревания – 120 дней, период плодоношения – 78 дней, контрольный – 102 дня соответственно, 132 и 72 дня. Товарная урожайность составила 378,2 т/га, общая урожайность – 384,2 т/га соответственно, на осадке – 290,6 и 296,9 т/га соответственно. От прорастания семян баклажана красного сорта Солсис до технического созревания плодов прошло 92 дня, биологического созревания – 120 дней, периода плодоношения – 80 дней. Товарная урожайность составила 390,1 ц/га, общая урожайность – 395,8 ц/га соответственно. От прорастания семян физалиса сорта Леди до начала созревания плодов прошло 87 дней, а период плодоношения составил 105 дней, а в контроле – 94 и 98 дней соответственно. Товарная урожайность составила 526,8 т/га, общая урожайность – 532,6 т/га соответственно и 420,2 и 428,4 т/га соответственно. В плодах томатов сортов Аспрам и Титан содержится 6,7 и 7,3% сухого вещества, 3,5 и 4,3% сахаров, 36,25 и 38,25мг% витамина С, 0,52 и 0,42% кислотности, а в тестере эти показатели составляют соответственно 6,7%, 3,5%, 36,15 мг%, 0,49%. Плоды сорта Эмми содержали 7,3% сухого вещества, 4,3% сахаров, 39,25 мг% витамина С, 0,47% кислотности, для тестера эти показатели составили 7,2% соответственно, 4,1%, 35,35мг%, 0,41%. Плоды перца острого Норабац содержали 8,8% сухого вещества, 4,5% сахаров, 98,25мг% витамина С в период технического созревания, 10,5,3% сухого вещества, 5,8% сахаров, 185,65мг% витамина С в период биологического созревания, а для тестера эти показатели составили 8,1% соответственно, 3,3%, 90,75мг%, 9,6%, 4,2%, 175,45мг%. Плоды баклажана сорта Солсис при техническом созревании содержали 7,4% сухого вещества, 3,4% сахаров, 4,85мг% витамина С, при биологическом созревании – 9,7% сухого вещества, 7,7% сахаров, 6,55мг% витамина С. В плодах сорта Физалис Леди содержалось 10,2% сухого вещества, 5,7% сахаров, 36,25 мг% витамина С, 0,59% кислотности, эти показатели по

тестеру составили соответственно 9,2%, 5,6%, 31,85мг%, 0,56%.

Проведенные исследования убедительно доказывают, что выведенные нами новые сорта показали лучшие свойства и характеристики, превосходя контрольные. Они заслуживают того, чтобы широко инвестировать в хозяйства разных зон республики, обеспечивать население качественными и ценными продуктами питания, а перерабатывающую промышленность — сырьем.

Ключевые слова: томат, черри, острый перец чили, баклажан, биологические свойства, морфологические показатели, сортоиспытание, урожайность, сухое вещество, сахара, витамин С, кислотность.

Ներածություն

Համաձայն ՄԱԿ-ի Գյուղատնտեսության և պարենի կազմակերպության (FAO) ամփոփված վիճակագրական տվյալների՝ պոմիդորի ցանքատարածությունները, միջին բերքատվությունը և արտադրությունը կազմում են՝ համապատասխանաբար՝ 4,725 միլիոն հա, 34,698 տ/հա, 163,964 միլիոն տ., բադրիջանիներ՝ համապատասխանաբար՝ 1,867 միլիոն հա, 26,464 տ/հա, 49,419 միլիոն տ., թարմ օգտագործման քաղցր և կծու տաքդեղի ցանքատարածությունները, միջին բերքատվությունը և արտադրությունը կազմում են՝ համապատասխանաբար՝ 1,933 միլիոն հա, 16,105 տ/հա, 31,131 միլիոն տ., իսկ չորացվող տաքդեղիներինը՝ համապատասխանաբար՝ 1,975 միլիոն հա, 1,751 տ/հա, 3,459 միլիոն տ [9]:

Մորմագգի բանջարային մշակաբույսերի տարածվածությունը և նրանց տեսակարար կշիռը բանջարեղենի համախառն արտադրանքի կառուցվածքում շատ երկրներում հիմնավորվում է հետևյալ հատկանիշներով՝ տարբեր բնակլիմայական պայմաններում աճի և պտղաբերման բարձր հատկություններով, բարձր բերքատվությամբ, պտուղների բազմապիսի նպատակներով օգտագործմամբ (թարմ օգտագործում, պահածոյացում, չորացում (պապրիկա) և այլ արտադրանքներ), Տաքդեղի պտուղները պարունակում են այնքան վիտամին C, որքան լիմոնի պտուղները: Պոմիդոր, տաքդեղ, բադրիջան, ֆիզալիս օգտագործում են բազմաթիվ ժողովուրդներ և ներկայումս սկսել են մշակվել աշխարհի շատ երկրների բաց ու պաշտպանված գրունտներում [1, 2, 11, 12]:

Մորմագգի բանջարային մշակաբույսերը, լինելով ջերմասեր մշակաբույսեր, ներկայումս ոչ միայն լայնորեն մշակվում են հարավային երկրներում, այլ տարեցտարի մեծ ուշադրության է արժանանում Եվրոպացիների կողմից [11]: Մեր հանրապետությունում լայնորեն մշակվում են Արարատյան հարթավայրի բաց և պաշտպանված գրունտներում, ինչպես նաև՝ մի շարք մարզերում՝ քիչ քանակությամբ: Կլիմայի փոփոխության ներկայիս պայմաններում մորմագգի բանջարային մշակաբույսերի մշակման համար առկա են մի շարք հիմնախնդիրներ: Սելեկցիոներների համար անհրաժեշտ է նոր ելանյութ և նրանց առջև այժմ խնդիր է դրվում ընտրելու և ստեղծելու բարձր բերքատու, հիվանդությունների և վնասատուների նկատմամբ առավել դիմացկուն, որակական բարձր ցուցանիշներով օժտված սորտեր և հիբրիդներ,

որոնք էկոլոգիական տարբեր պայմաններում մշակելիս կցուցաբերեն բարձր արդյունավետություն **[5, 6, 7, 8]**: Նկատի ունենալով տնտեսական կարևոր նշանակություն ունեցող այս հարցի արդիականությունը, բանջարեղենի արտադրության և նրա տեսականու ավելացման գործում կարևորվում են տարեցտարի աճող և լայն պահանջարկ ունեցող պոմիդորի, տաքդեղի, բադրիջանի և ֆիզալիսի մշակման նոր գոտիների բացահայտումը, ցանքատարածությունների ավելացումը, որոնք սերտորեն կապված են տվյալ գոտու պայմաններում հարմարված նոր սորտերի և հիբրիդների առանձնացման հետ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արարատյան հարթավայրում՝ կլիմայի տարեցտարի փոփոխության (բարձր ջերմաստիճան) էական ազդեցություն է զգացվում, անհրաժեշտություն է առաջացել գիտականորեն հիմնավորելու և կատարելու շոգեդիմացկուն սորտերի ներդրում:

Մորմազգի (*Solanaceae*) բանջարային մշակաբույսերից՝ պոմիդորը, տաքդեղը և բադրիջանը մեր հանրապետության առաջատար բանջարային մշակաբույսերն են, և նրանց արտադրությունն ու սելեկցիոն գործընթացները շուրջ 75 տարի կատարվում են մեր հանրապետությունում՝ Գիտական կենտրոնի Մորմազգի մշակաբույսերի սելեկցիայի և մշակության տեխնոլոգիայի բաժնում, իսկ պոմիդորի սելեկցիոն աշխատանքները մեր հանրապետությունում կատարվում են ավելի քան 92 տարի **[13, 14]**: Բուծված հայկական սորտերը տասնամյակներ շարունակ և այժմ էլ մշակվում են գյուղատնտեսության արտադրությունում ու լայնորեն օգտագործվում են մեր ազգաբնակչության կողմից՝ թարմ և վերամշակված վիճակում: Մորմազգի բանջարային մշակաբույսերի սելեկցիայի համար որոշիչ դեր ունեն նրանց գենետիկական ռեսուրսները, որոնց մասնակցությամբ բուծվում են նոր սորտերը և հիբրիդները **[15]**: Գենետիկական ռեսուրսների, որի մեջ ներառված են մորմազգի բանջարային մշակաբույսերի վայրի և հիմնավորց ձևեր, օրեգինալ և հաստատուն հիբրիդներ, մշակովի և կոմերցիոն սորտեր և հիբրիդներ, ուսումնասիրման միջոցով մենք ձգտում ենք բացահայտել տարբեր նմուշների կենսաբանական, մորֆոլոգիական, ագրոնոմիական, որակական, դիմացկանության լավագույն հատկանիշները և հատկությունները, որոնք հետագայում համակցվում են մեկ սորտում կամ հիբրիդում: Արդյունքում գյուղատնտեսական արտադրությանը տրամադրվում են այնպիսի սորտեր և հիբրիդներ, որոնք բազմաթիվ հատկանիշներով գերազանցում են նախկինում մշակվող սորտերին: Ներկայումս բուծվող նոր սորտերի և հիբրիդների համար պահանջվում է, որ դրանք լինեն բարձր բերքատու, ադապտիվ, դիմացկուն միջավայրի անբարենպաստ կլիմայական պայմանների, հիվանդությունների և վնասատուների նկատմամբ, ունենան բարելավված համային, որակական և այլ հատկանիշներ, լինեն պահունակ և փոխադրաունակ, ունենան ավելի լավ ապրանքային տեսք և բավարարեն գնողունակության պահանջները **[16]**:

Տեսամեթոդական հիմքեր

Մորմազգի բանջարային մշակաբույսերը հանդիսանում են բուսական ծագման անփոխարինելի սննդամթերք և ունեն կարևոր տնտեսական

նշանակություն: Մարդու օրգանիզմի վրա էկոլոգիական և սոցիալական համատեղ ճնշումների աճը պահանջում է նրանից լիարժեք սննդի ընդունում: Դրա համար էլ այս բանջարեղենները դիտարկվում են որպես բարձր կենսաբանական արժեք ունեցող, բազմապիսի վիտամիններով, անփոխարինելի ամինոթթվածներով, հանքային աղերով, միկրո և մակրոէլեմենտներով, ածխաջրերով, օրգանական թթուներով, բակտերիոցիդ հատկություն ունեցող պեկտինային նյութերով, բետտա կարոտինով հակաօքսիդանտային հատկություններով հարուստ սննդամթերքներ: Շնորհիվ իրենց մեջ պարունակող տարաբնույթ բուժիչ և համային նյութերի, ինտենսիվ պայծառ գունավորումների ու գեղեցիկ ձևերի, նրանք սնունդը դարձնում են ախորժալի և դյուրամարս, նպաստում են մարդկանց օրգանիզմում մի շարք հիվանդությունների կրճատմանը: Կարելի է հաստատել, որ այս բանջարեղենները ուղղակի կապ ունեն մարդկանց առողջության, աշխատանքի բարձր արտադրողականության, կյանքի երկարատևության և, վերջապես, երջանկության հետ [9, 11, 12]:

Զարգացած երկրների էկոնոմիկայում մորմագգի բանջարային մշակաբույսերի մշակությունը և արտադրությունը հանդիսանում է կառուցվածքային և առաջատար ճյուղերից մեկը: Նրանց արտադրության զարգացումը իր հետևից «տանում» է նաև էկոնոմիկայի տարբեր ճյուղեր, այսպես՝ գիտությունը, գյուղմեքենաշինությունը, վերամշակման և պահածոյացման արդյունաբերությունը, հանքային ու կենսաբանական պարարտանյութերի և բույսերի պաշտպանության միջոցների արտադրությունը, տարբեր շրջաններում նոր ջերմատնային կոմբինատների, բանջարեղենների պահպանման պահեստների, լոգիստական կենտրոնների, ապրանքատեղափոխման համար երկաթգծերի, ճանապարհների, էլեկտրոցանցների, մելորատիվ և իռիգացիոն և այլ համակարգերի շինարարությունները: Այս ամենը պահանջում է տեսական, մեթոդոլոգիական և գործնական պրոբլեմների ձևավորման, յուրաքանչյուր ճյուղի խորը ուսումնասիրություն ագրոարդյունաբերական համալիրի հետագա զարգացման համար, որի հիմքը հանդիսանում է արտադրության արդյունավետության բարձրացումը կլիմայի փոփոխության տարբեր պայմաններում [2, 9, 10, 12]:

Հաշվի առնելով վերը նշված գիտահետազոտական աշխատանքների կարևորությունը՝ մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ունեն կարևոր գործնական նշանակություն և կիրառություն:

Ուսումնասիրության մեթոդներ

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԷՆ բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի Դարակերտի փորձարարական տնտեսությունում՝ բաց դաշտում՝ 2022-2024 թթ. (ՀՀ Արարատյան հարթավայրի պայմաններ):

Ուսումնասիրության համար հիմքեր են ծառայել պետական սորտափորձարկման մեջ ներկայացված պոմիդորի թարմ սպառման համար նախատեսված՝ *Ասպրամ*, *Տիպան* /ստուգիչը՝ Լիա/, չերի պոմիդորի՝ *Էմմի* /ստուգիչը՝ Զեյթուն/, չիլի տաքդեղի՝ *Նոբաբուգ* /ստուգիչը՝ Գիտա/, վայրի՝ *Solanum*

sisymblofolium կարմիր բադրիջանից բուծված՝ *Սոլսիս* /առանց ստուգիչի/, ֆիզալիսի՝ *Լեդի* /ստուգիչը՝ Ջանգակ/ նոր սորտերը:

Աղյուսակ 1

Մորմազգի բանջարային մշակաբույսերի նոր սորտերը

Նոր սորտի անվանումը	Բուծող սեղելցիոներները, հեղինակները	Պատուների նկարը	Ծագումնաբանությունը
Թարմ սպառման պոմիդոր			
Ասպրամ	Կարինե Սառիկյան, Գայանե Մարտիրոսյան, Ալվինա Ավագյան, Էմմա Հակոբյան		Բուծվել է՝ պոմիդորի Տավուշի տեղական պոպուլյացիայից անհատական ընտրության մեթոդով
Տիտան	Կարինե Սառիկյան, Գայանե Մարտիրոսյան, Ալվինա Ավագյան, Էմմա Հակոբյան		Բուծվել է՝ հիբրիդացման և կրկնակի բեկկրոսի կիրառման մեթոդով՝ պոմիդորի Չվարթոնգ 412 և Բոբկատ սորտերի միջև Չվարթոնգ x Բոբկատ (I -ին տրամախաչում) (Չվարթոնգ x Բոբկատ) F1 x Բոբկատ (II -րդ տրամախաչում, I բեկկրոս) ((Չվարթոնգ x Բոբկատ) F1 x Բոբկատ) F1 x Բոբկատ (III-րդ տրամախաչում, II բեկկրոս)
Չերի պոմիդոր			
Էմմի	Կարինե Սառիկյան, Գայանե Մարտիրոսյան, Ալվինա Ավագյան, Էմմա Հակոբյան		Բուծվել է՝ միջտեսակային հիբրիդացման և կրկնակի բեկկրոսի կիրառման մեթոդով՝ մշակովի պոմիդորի <i>Lycopersicon esculentum</i> Mill տեսակի (հայկական սորտ Չվարթոնգ 412) և վայրի պոմիդորի <i>Lycopersicon pennellii</i> տեսակի (սորտանմուշ LA 716), որը ներկրվել է INRA-ից Փրանսիայից Չվարթոնգ 412 x LA 716 (I -ին տրամախաչում) (Չվարթոնգ 412 x LA 716) F1 x LA 716 (II -րդ տրամախաչում, I բեկկրոս) ((Չվարթոնգ 412 x LA 716) F1 x LA 716) F1 x LA 716 (III-րդ տրամախաչում, II բեկկրոս))
Չիլի տաքդեղ			
Նորաբաց	Կարինե Սառիկյան, Գայանե Մարտիրոսյան, Ալվինա Ավագյան, Մարինե Գրիգորյան		Բուծվել է միջտեսակային, պեդիգրի մեթոդով, տրամախաչման համար հիմք են հանդիսացել քաղցր տաքդեղի՝ Նատալի և կծու տաքդեղի Գիտա Գիտա /չիլի/ սորտերը:

Կարմիր բադրիջան			
Սուխիս	Կարինե Սառիկյան, Գայանե Մարտիրոսյան, Ալվինա Ավագյան, Մարինե Գրիգորյան		Բուծվել է անհատական ընտրության մեթոդով, բադրիջանի վայրի, Սկառլետ/կարմիր/ տեսակին / <i>Solanum sisymbriifolium</i> Lam/ պատկանող MA-284 նմուշից, որը ինտրոդուկցվել է Հայաստան մեր միջոցով 2004 թվականին INRA-ի գենբանկից, Ֆրանսիայից:
Ֆիզալիս			
Լեդի	Կարինե Սառիկյան, Գայանե Մարտիրոսյան, Ալվինա Ավագյան,		Բուծվել է հիբրիդացման մեթոդով՝ ֆիզալիսի տեղական Չանգակ և ռուսական սելեկցիայի Կոնդիտեր սորտերի միջև տրամախաչում:

Այս սորտերի ուսումնասիրությունը, ֆենոլոգիական դիտումները, կենսամետրիկ չափումները կատարվել են «Մորմազգի բանջարային մշակաբույսերի համաշխարհային հավաքածուի մեթոդական ցուցումներ»–ին և Բանջարեղենի համաշխարհային կենտրոնի (AVRDC) «Փորձարարական դիզայնի բլոկային ռոնդոմիզացիայի մեթոդական ցուցումներ»–ին համաձայն [4, 17]:

Փորձի տարիներին հողի մշակումը և բույսերի խնամքը կատարվել է միևնույն ագրոֆոնում և միատեսակ, հանրապետությունում ընդունված տեխնոլոգիայով: Սերմերի ցանքը կատարվել է մարտի 15–20–ի, սածիլումը՝ մայիսի 10–15–ի միջև ընկած ժամանակամիջոցում, փորձամարզի մեծությունը՝ սորտափորձարկման տնկարանում՝ 10 քմ, սածիլները տնկվել են պոմիդորի սորտերի մոտ՝ (90+70)×25սմ, չիլի տաքդեղի սորտերի մոտ (90+70)×20սմ, բադրիջանի սորտի մոտ՝ (90+70)×30սմ տնկման սխեմայով:

Կենսաբանական, մորֆոլոգիական և տնտեսական արժեքավոր հատկանիշներն ուսումնասիրվել և բնութագրվել են Պոմիդորի, Տաքդեղի, Բադրիջանի տեսակների միջազգային դասակարգիչներին համապատասխան [19, 20, 21]:

Ուսումնասիրված մշակաբույսերի նոր սորտերի կենսաբանորեն հասունացած պտուղներում գնահատել է կենսաակտիվ միացությունների պարունակությունը: Չոր նյութերի պարունակությունը որոշվել է ռեֆրակտոմետրով, իսկ շաքարների, վիտամին C-ի, տրվոլ թթվայնության պարունակությունը՝ որոշվել է «Cary 60 UV-Vis» սպեկտրոֆոտոմետրի միջոցով (Agilent Technologies, ԱՄՆ) 445 նմ ալիքի երկարության վրա՝ 0.1N HCl լուծիչի նկատմամբ [18]:

Բերքատվության տվյալները վիճակագրական վերլուծության են ենթարկվել «Analysis of Variance (ANOVA)» համակարգչային ծրագրով՝ բացահայտելով նվազագույն նշանակալի տարբերությունը (LSD):


Ստացված արդյունքները

Հետազոտությունների ընթացքում ուսումնասիրել ենք պոմիդորի, տաքդեղի, բադրիջանի, ֆիզալիսի նոր սորտերի կենսաբանական, մորֆոլոգիական, տնտեսական արժեքավոր, որակական հատկությունները և հատկանիշները: Կենսաբանական, մորֆոլոգիական, տնտեսական արժեքավոր մի քանի հատկություններ և հատկանիշներ բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Մորմագգի բանջարային մշակաբույսերի նոր սորտերի կենսաբանական, մորֆոլոգիական, տնտեսական արժեքավոր հատկությունները 2022–2024 թթ. միջինը

Սորտեր	Չանգվածային ծլումից մինչև հասունացում, 1-ին բերքահավաք, օրեր	Պտղաբերման շրջան, օրեր	Ապրանքային բերքը, գ/հա	Պտղի միջին զանգվածը, գրամ	Պտուղների գույնը կենսաբանական հասունացման շրջանում	Պտուղների ձևը
Թարմ սպառման պոմիդոր						
Լիա/ստուգիչ/	117	71	690,5	130,2	կարմիր	կլոր
Ասպրամ	108	71	765,5	260,2	կարմիր	կլոր
Տիտան	116	80	955,2	190,5	կարմիր	կլոր
Չերի պոմիդոր						
Չեյթուն/ստուգիչ/	106	72	306,2	6	կարմիր	Էլիպսաձև
Էմմի	102	80	310,5	6	կարմիր	կլոր
Չիլի տաքդեղ						
Գիտա/ստուգիչ/	132	72	290,6	6	կարմիր	Նեղ, Երկար կոնաձև
Նորարաց	120	78	378,2	12	նարնջագույն	Լայն, Կարճ կոնաձև
Կարմիր բադրիջան						
Սոլսիս	120	80	390,1	8	կարմիր	կլոր
Ֆիզալիս						
Չանգակ/ստուգիչ/	94	98	420,2	46	դեղնականաչ	կլոր
Լեդի	87	105	526,8	47	Դեղին	կլոր



Նկար 1. Մորմազգի բանջարային մշակաբույսերի նոր սորտերի միջին բերքատվությունը 2022–2024թթ. Արարատյան հարթավայրի պայմաններում

Ուսումնասիրված սորտերը աչքի են ընկել կենսաբանական, մորֆոլոգիական, տնտեսական արժեքավոր հատկություններով և հատկանիշներով: Նոր սորտերը վաղահասությամբ, բերքատվությամբ գերազանցել են ստուգիչ սորտերին: Պոմիդորի *Ասպրամ* և *Տիպրան* սորտերի սերմերի ծլումից մինչև պտուղների հասունացումը տևել է համապատասխանաբար՝ 116 և 108 օր, իսկ պտղաբերման շրջանը՝ 71 և 80 օր, իսկ ստուգիչի մոտ համապատասխանաբար՝ 117 և 71 օր: Ապրանքային բերքը *Ասպրամ* և *Տիպրան* սորտերի մոտ կազմել է 765,5 և 955,2g/հա, իսկ ընդհանուր բերքը՝ համապատասխանաբար՝ 770,4 և 970,8 g/հա, իսկ ստուգիչի մոտ համապատասխանաբար՝ 690,5 և 697,3 g/հա: Նրանց մոտ պտուղների միջին զանգվածը կազմել է՝ համապատասխանաբար՝ 260,2 և 190,5 գրամ, իսկ ստուգիչի մոտ՝ 130,2գրամ: *Ասպրամ* և *Տիպրան* սորտերի պտուղների գույնը կենսաբանական հասունացման շրջանում կարմիր է, ձևը՝ կլոր: Նույնը նաև ստուգիչի պտուղների մոտ է: Չերի պոմիդորի՝ *Էմմի* սորտի սերմերի ծլումից մինչև պտուղների հասունացումը տևել է՝ 102 օր, իսկ պտղաբերման շրջանը՝ 80 օր, իսկ ստուգիչի մոտ՝ համապատասխանաբար՝ 106 և 72 օր: Ապրանքային բերքը կազմել է՝ 310,5g/հա, իսկ ընդհանուր բերքը՝ համապատասխանաբար՝ 314,8g/հա, իսկ ստուգիչի մոտ համապատասխանաբար՝ 306,2 և 309,4g/հա: Նրա մոտ պտուղների միջին զանգվածը կազմել է 6 գրամ, իսկ ստուգիչի մոտ դարձյալ 6 գրամ: Էմմի սորտի պտուղների գույնը կենսաբանական հասունացման շրջանում կարմիր է, ձևը՝ կլոր, իսկ ստուգիչի մոտ պտուղների ձևը՝ էլիպսաձև է: Չիլի տաքդեղի՝ *Նորաբաց* սորտի սերմերի ծլումից մինչև պտուղների տեխնիկական հասունացումը տևել է 97 օր, իսկ կենսաբանական հասունացումը՝ 120 օր, պտղաբերման շրջանը՝ 78 օր, իսկ ստուգիչի մոտ՝ համապատասխանաբար՝ 102, 132 և 72 օր: Ապրանքային բերքը կազմել է 378,2g/հա, ընդհանուր բերքը՝ համապատասխանաբար՝ 384,2g/հա, իսկ ստուգիչի մոտ համապատասխանաբար՝ 290,6 և 296,9g/հա: Նրա մոտ պտուղների միջին զանգվածը կազմել է 12 գրամ, իսկ ստուգիչի մոտ՝ 8


գրամ: Չիլի տաքդեղի *Նորաբաց* սորտի պտուղների գույնը տեխնիկական հասունացման շրջանում մուգ կանաչ է, կենսաբանական հասունացման շրջանում նարնջագույն է, պտուղների ձևը՝ լայն, կարճ կոնաձև է, իսկ ստուգիչի մոտ պտուղների գույնը համապատասխանաբար կանաչ և կարմիր է, ձևը՝ նեղ, երկար կոնաձև: Կարմիր բաղրիջանի Սոլսիս սորտի սերմերի ծլումից մինչև պտուղների տեխնիկական հասունացումը տևել է 92 օր, կենսաբանական հասունացումը՝ 120 օր, պտղաբերման շրջանը՝ 80 օր: Ապրանքային բերքը կազմել է 390,1գ/հա, իսկ ընդհանուր բերքը՝ համապատասխանաբար՝ 395,8գ/հա: Նրա մոտ պտուղների միջին զանգվածը կազմել է 8 գրամ: Սոլսիս սորտի պտուղների գույնը տեխնիկական հասունացման շրջանում մուգ կանաչ է, կենսաբանական հասունացման շրջանում կարմիր է, պտուղների ձևը կլոր է: Ֆիզալիսի *Լեդի* սորտի սերմերի ծլումից մինչև պտուղների հասունացման սկիզբը տևել է 87 օր, իսկ պտղաբերման շրջանը՝ 105 օր, իսկ ստուգիչի մոտ՝ համապատասխանաբար՝ 94 և 98 օր: Ապրանքային բերքը կազմել է 526,8գ/հա, իսկ ընդհանուր բերքը՝ համապատասխանաբար՝ 532,6գ/հա, իսկ ստուգիչի մոտ համապատասխանաբար՝ 420,2 և 428,4գ/հա: Նրա մոտ պտուղների միջին զանգվածը կազմել է՝ 57 գրամ, իսկ ստուգիչի մոտ՝ 46 գրամ: Լեդի սորտի պտուղների գույնը կենսաբանական հասունացման շրջանում դեղին է, պտուղների ձևը՝ կլոր է, իսկ ստուգիչի մոտ, համապատասխանաբար՝ դեղնականաչ և կլոր (աղյուսակ 2, նկար 1):



Նկար 2. Մորմագգի բանջարային մշակաբույսերի նոր սորտերի պտուղներում չոր նյութերի պարունակությունը:


Ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ պոմիդորի *Ասպրամ* և *Տիտան* սորտերի պտուղները պարունակել են 6,7 և 7,3% չոր նյութեր, իսկ ստուգիչի մոտ այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 6,7%: *Էմմի* սորտի պտուղները պարունակել են 7,3% չոր նյութեր, իսկ ստուգիչի մոտ այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 7,2%: *Նորաբաց* սորտի պտուղները տեխնիկական հասունացման շրջանում պարունակել են 8,8%, իսկ կենսաբանական հասունացման շրջանում՝ 10,5,3% չոր նյութեր, իսկ ստուգիչի

մոտ այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 8,1% և 9,6%: *Սոլսիս* սորտի պտուղները տեխնիկական հասունացման շրջանում պարունակել են 7,4%, իսկ կենսաբանական հասունացման շրջանում՝ 9,7% չոր նյութեր: *Լեդի* սորտի պտուղները պարունակել են 10,2% չոր նյութեր, իսկ ստուգիչի մոտ այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 9,2% /նկար 2/:




Նկար 3. Միրմագգի բանջարային մշակաբույսերի նոր սորտերի պտուղներում շաքարների պարունակությունը:

Ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ պոմիդորի *Ասպրամ* և *Տիտան* սորտերի պտուղները պարունակել են 3,5 և 4,3% շաքարներ իսկ ստուգիչի մոտ այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 3,5%: *Էմմի* սորտի պտուղները պարունակել են 4,3% շաքարներ, իսկ ստուգիչի մոտ այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 4,1%: *Նորաբաց* սորտի պտուղները տեխնիկական հասունացման շրջանում պարունակել են 4,5%, կենսաբանական հասունացման շրջանում՝ 5,8% շաքարներ, իսկ ստուգիչի մոտ այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 3,3% և 4,2%: *Սոլսիս* սորտի պտուղները տեխնիկական հասունացման շրջանում պարունակել են 3,4% շաքարներ, կենսաբանական հասունացման շրջանում՝ 7,7% շաքարներ: *Լեդի* սորտի պտուղները պարունակել են 5,7% շաքարներ, իսկ ստուգիչի մոտ այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 5,6% (նկար 3):



Նկար 4. Մորմագգի բանջարային մշակարույսերի նոր սորտերի պտուղներում վիտամին C-ի պարունակությունը:

Ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ պոմիդորի *Ասպրամ* և *Տիսուն* սորտերի պտուղները պարունակել են 36,25 և 38,25մգ% վիտամին C, իսկ ստուգիչի մոտ այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 36,15մգ%: *Էմմի* սորտի պտուղները պարունակել են 39,25մգ% վիտամին C, իսկ ստուգիչի մոտ այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 35,35մգ%: Նորաբաց սորտի պտուղները տեխնիկական հասունացման շրջանում պարունակել են 98,25մգ% վիտամին C, կենսաբանական հասունացման շրջանում՝ 185,65մգ% վիտամին C, իսկ ստուգիչի մոտ այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 90,75մգ% և 175,45մգ%: *Սուլիս* սորտի պտուղները տեխնիկական հասունացման շրջանում պարունակել են 4,85մգ% վիտամին C, կենսաբանական հասունացման շրջանում՝ 6,55մգ% վիտամին C: *Լեդի* սորտի պտուղները պարունակել են 36,25մգ% վիտամին C, իսկ ստուգիչի մոտ այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 31,85մգ%:



Նկար 5. Միումագգի բանջարային մշակարույսերի նոր սորտերի պտուղներում թթվայնության պարունակությունը:

Ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ պոմիդորի *Ասպրամ* և *Տիտան* սորտերի պտուղները պարունակել են 0,52 և 0,42% թթվություն, իսկ ստուգիչի մոտ այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 0,49%: *Էմմի* սորտի պտուղները պարունակել են 0,47% թթվություն, իսկ ստուգիչի մոտ այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 0,41%: Նորաբաց սորտի պտուղները տեխնիկական հասունացման շրջանում պարունակել են 0,48%, կենսաբանական հասունացման շրջանում՝ 0,43% թթվություն, իսկ ստուգիչի մոտ այդ ցուցանիշը կազմում է համապատասխանաբար՝ 0,49%: *Սոլսիս* սորտի պտուղները տեխնիկական հասունացման շրջանում պարունակել են 0,45%, իսկ կենսաբանական հասունացման շրջանում՝ 0,47%: *Լեղի* սորտի պտուղները պարունակել են 0,59% թթվություն, իսկ ստուգիչի մոտ այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 0,56%:

Եզրակացություն

Կատարված ուսումնասիրությունները համոզիչ վկայում են, որ մեր կողմից բուծված նոր սորտերը, գերազանցելով ստուգիչներին, ցուցաբերել են լավագույն հատկությունները և հատկանիշները: Նրանք արժանի են լայնորեն ներդնելու հանրապետության տարբեր գոտիների ֆերմերային տնտեսություններում, ազգաբնակչությանը որակյալ և բարձրարժեք սննդամթերքով, իսկ վերամշակող արդյունաբերությանը՝ հումքով ապահովելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. Мамедов М.И., Пышная О.Н., Джос Е.А., Шмыкова Н.А, Супрунова Т.П., Митрофанова О.А., Вербя В.М.. *Баклажан (Solanum spp.)* / М.: Изд-во ВНИИССОК, 2015.– 264 с.
2. Пивоваров В.Ф., Мамедов М.И, Бочарникова Н.И. Пасленовые овощные культуры./ Москва, 1998, 150с.
3. Дикий С.П. – Международный классификатор по *Capsicum annuum* L. и *Solanum melongena* L., 1974г.
4. Методические указания по изучению мировой коллекции пасленовых овощных культур. Л., 1968, 12 с.
5. Sarikyan K., Kirakosyan G., Grigoryan M., Vardanyan V., Sahradyan G., Ghazaryan D., Zhamharyan A. Study of anthocyanins in several genetic resources from the national eggplant collection of Armenia. *Bioactive Compounds in Health and Disease, SIR Q2 (Scopus)* 2024, 7(12): 636–648. DOI: <https://doi.org/10.31989/bchd.v7i12.1518>
6. Sarikyan K., Grigoryan M., Shaboyan G., Zadayan M., Kirakosyan G. Biochemical properties of several genetic resources of the national tomato germplasm.. *Bioactive Compounds in Health and Disease* 2024, 7(1):51–64. DOI:<https://doi.org/10.31989/bchd.v7i2.1305> SIR– Q3 (Scopus)
7. V. A. Vardanyan, G. V. Kirakosyan, G. Shaboyan, R. K. Simonyan and K. M. Sarikyan . Study of biological and agronomical evaluation of tomato...// BIO Web Conf. Volume 126, 2024, International Conference on Advance in Energy, Ecology and Agriculture (AEEA2024), 01004, page 7, Publisher EDP Publishing LTD, The Book Citation Index in Web of Science (Scopus). <https://doi.org/10.1051/bioconf/202412601004>
8. V.A.Vardanyan, G.V.Kirakosyan, R.K.Simonyan, K.M.Sarikyan. Study of the morphological characteristics of several valuable Armenian tomato varieties. // E3S Web of Conferences 494, 04016 (2024), International Conference on Ensuring Sustainable Development: Ecology, Energy, Earth Science and Agriculture (AEES2023), p. 1–6, Publisher EDP Publishing LTD, The Book Citation Index in Web of Science (Scopus) DOI: <https://doi.org/10.1051/e3sconf/202449404016>
9. Mamedov M.I. Vegetable production in the World: Production of main Vegetable crops, development trend during 1993–2013 based on the data of FAO. // *Vegetables of Russia*, М., 2 (27), page 3–9
10. Tripodi Pasquale, Roberto Lo Scalzo, Nadio Ficcadenti Dissection of heterotic, genotypic and environmental factors influencing the variation of yield components and health-related compounds in chilli pepper (*Capsicum annuum*), June 2020, *Euphytica* 216(7), DOI:<https://doi.org/10.1007/s10681-020-02648-0>
11. Pishnaya O.N., Mamedov M.I., Pivavarov V.F. Pepper breeding. /M.VNISSOK publishing, 2012. – 248 p.
12. Pivovarov V.F., Mamedov M.I, Bocharnikova N.I. Solanaceae crops: Tomato, Pepper, Eggplant, *Physalis*, М., 1998, page 293
13. Sarikyan K.M. Solanaceae genetic resources in Armenia. Report of the two meetings on Solanaceae genetic resources in Europe. IPGRI, 22 May 2003, Skierniewice, Poland, pp. 39–40
14. Sarikyan K.M. Status of the national Solanaceae collection in Armenia. //Report of the ad hoc meeting held jointly with the Fifth meeting of the EGGNET Project, IPGRI, Italy, 2006, P. 16–20
15. Sarikyan K.M., Sargsyan G.J., Zurabyan V.E., Martirosyan G.S., Hayrapetova S.A. Evalvation of national Solanaceae collection in Armenia. //Report of the ECP/GR VEGENT Second meeting held in Bioversity International, Olomouc, Czech, Jun. 24–26, 2007, P.135–136
16. K. M. Sarikyan, M. G. Grigoryan, E. A. Akopyan, A. K. Zurabyan and G. S. Martirosyan. Selection of miniature varieties of Solanaceae crops in Armenia. //ESDCA–II–2022, IOP Conf. Series: Earth and Environmental Science 1045 (2022) 012093, Publisher IOP Publishing LTD, The Book Citation Index in Web of Science, (Scopus), DOI: [doi:10.1088/1755 1315/1045/1/012093](https://doi.org/10.1088/1755-1315/1045/1/012093)
17. Dolores R. Ledesma. Experimental Design, Analysis of Variance IRRISTAT, AVRDC, Tawan, 2006, P.15
18. Giusti M. M., Wrolstad R. E. Characterisation and measurement of anthocyanins by UV–visible spectroscopy. *Curr. Protoc. Food Anal. Chem.* 2001, F1.2.1–F1.2.13. DOI: <https://www.doi.org/10.1002/0471142913.faf0102s00>
19. IPGRI, AVRDC and CATIE. 1995. Descriptors for *Capsicum* (*Capsicum* spp.)
20. AVRDC–CRSU characterisation record sheet (tomato, eggplant, pepper)– 2007
21. Descriptor for Eggplant– IPGRI, 1980.